



## ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԻ Հոփի՝ Վեր. Տիգրան Ծանկեան

Տարի 10, Թիւ 111 Դեկտեմբեր 2002

### ՊԱՏՐԱՍ ԸԼԼԱԼ

«Սիրոս պատրաստ է, ով Աստուած, սիրոս պատրաստ է...»  
Սաղմ. 57:7

**Վ**երջին ժամանակներու ահաբեկչութիւնը Ամերիկայի մէջ ու դուրս, մղեց Աստուծոյ հետ յարաբերութեան առնելու յատուկ քայլեր: Յաջորդին համար պատրաստ ըլլալ մեծ հրամայական է այսօր:

Կեանքի բոլոր շրջաններուն պատրաստութեան կը կարօտինք:

Դպրոց երթալու համար, շուկայ երթալու համար, շրջանավարտ ըլլալու համար, ամուսնանալու համար, զաւակ ունենալու համար, պաշտամունքի եւ արձակուրդի երթալու համար պէտք ունինք պատրաստուելու: Երբեմն կը ջղայնանանք, երբ կ'աճապարենք տեղ մը երթալու եւ տակաւին ընտանիքի անդամներէն մէկը տունէն դուրս չէ ելած, իսկ մնացեալներս ինքնաշարժին մէջը ամիսփութեամբ ենք:

Այս օրերուն տօնական օրերու առթիւ պատրաստութիւններ կը տեսնուին. ցուցաբերելու կը զարդարուին, գնումներ կը կատարուին, հրաւերներ կը դրկուին եւ նուէրներ կը գնուին:

Յիշեալները ժամանակատար են ու մարմնատար. անդին կայ հոգեւորը: Որպէս հաւատացեալներ ի՞նչ բաներու համար պատրաստ ըլլալու ենք:

#### 1. Պատրաստ ըլլալ պատասխան տալու. (Ս. Պետ. 3:15)

Երբ հարցնեն Յոյսին պատճառը. երբ հարցնեն ուրախութեանս եւ խաղաղութեանս պատճառը: Որպէս հաւատացեալ պատրաստ ըլլալու եմ պատասխանելու: Աստուածաշունչը կը սորվեցնէ թէ մեր պատասխանը ըլլալու է հեզութեամբ եւ երկիւղածութեամբ: Ուստի կարեալ է ապրիլ «Երջանիկ Յոյսով». յուսահատութիւնն ու պէկոծութիւնը երբ կայ Յոյսը չհշմարտիր: Դուն պատրաստ եղիր, միշտ, ամենուն պատասխանելու քու փրկութեանը վերաբերեալ:

#### 2. Պատրաստ Աւետարանը քարոզելու. (Հոփմ. 1:15)

Առաքելալը կ'ըսէ «ես ամօթ չեմ սեպեր ավետարանը քանզի Աստուծոյ զօրութիւնն է այն»:

Աւետարանը քարոզելու տարբեր կերպեր կան: Խօսքով վկայել, թերթիկ բաժնել, ծառայել ու նաև կեանքով քարոզել, մի քանի կերպեր են քարոզություն: Ամենէն ազդեցիկը կեանքով քարոզելն է: Ոմանք առիթ պիտի չունենան եւ պիտի չկարդան չորս աւետարանները, սակայն բոլորն ալ պիտի կարդան հինգերորդ աւետարանը, քեզ, քու կեանքդ: Ի՞նչ պատգամ կը փոխանցես:

**3. Պատրաստ բարի գործերու (Տիտոս 3:1)**

Մենք չենք փրկուած բարի գործերով, այդ կարելի բան չէ: Քրիստոսի պատուական արհմով փրկուելով կը մղուինք բարի գործեր ընելու: Բարի գործերը փրկուած ըլլալու արդիւնքն է: Աստուածաշունչը պարզ կը ներկայացնէ թէ երբ բան մը կրնամ ընել, օգտակարութիւն մը կրնամ ունենալ բայց կը զլանամ, Տիրոջը առջեւ մեղք գործած կ'ըլլամ: Խօսքին լոյսին տակ բարի գործը նախ ըլլալու է հաւատքի ընտանիքին հասցէով, ապա ուրիշներու:

**4. Պատրաստ մտնելու (Գործք Առաք. 21:13)**

Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Ի՞նչու կու լաք ու սիրտ կը ճմլէք, ես ոչ թէ Երուսաղէմի մէջ կապուելու հապա նաև մտնելու ալ պատրաստ եմ»:  
Դուն պատրաստ ես մտնելու, գիտնալով որ մահը կեանքի դուռն է: Երբ մտնիս կ'ապրիս երկնքի մէջ, դէմ առ դէմ տեսնելու միակ միջոցը, եթէ Տէրը ուշացնէ իր ծրագիրը, մտնիմ է: Հիմա հալելի մէջ կը տեսնես, այն ատեն դէմ առ դէմ:

**5. Պատրաստ փառքը մտնելու (Մատթ. 25:10)**

Տասը կոյսերու պարագան ի մտի ունեցիր: Յիմարները զացին իւղ գնելու, փեսան եկաւ ու պատրաստ եղողները անոր հետ հարսնիքը մտան:

Մարթին Լուտերի օրացոյցին վրայ երկու օր կար միայն – այսօր եւ «այն օրը»: Սքանչելի իրապատուկ ապրելակերպ, երբ պատրաստ ես փառքը մտնելու, որովհետեւ ապրած ես այդ փառքին համար:

Դաւիթ, վերոյիշեալ համարով ցոյց կու տայ իր պատրաստ վիճակը պաշտամունքի եւ փառաբանութեան: Անիկա Սառուի երեսէն փախչելով քարայրին մէջ կ'ապաստանի: Իր անձին ապահովութիւնը, Տիրոջը շնորհած առաջնորդութիւնը կը մղէ Տիրոջը առջեւ պատրաստ ըլլալու եւ աղաղակելու «Սիրտս պատրաստ է»:

Տէրը տայ որ ամէն հաւատացեալ պատրաստ ըլլայ. իսկ եթէ դուն տակաւին հաւատացեալ չես, պատրաստ ըլլալու առաջին քայլը Յիտոս Քրիստոսի շնորհքով փրկուիմ է:

---

**ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒՆԻ ՀԵՏԵԻԵԱԼ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԸ**

- Կիրակի** – Առաւօտեան 11-ին Պաշտամունք  
Մանուկներու Կիրակնօրեայ
- Երեքշաբթի** – Երեկոյեան 7-ին Սերտողութիւն
- Հինգշաբթի** – 7-ին Երիտասարդաց Սերտողութիւն  
8:30-ին Երգչախումբի Փորձ
- Ուրբաթ** – Առաւօտեան 10:30-ին Քոյրերու Ժողով  
7:30-ին Պատանեաց
- Շաբաթ** – Ամէն Ամսուայ Վերջին Շաբաթը Երեկոյեան  
7-ին Երիտասարդ Ջոյգերու Ժողով

# ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՏԵՐՈՋ ՓԱՌՔԻՆ ՀԱՄԱՐ

- Մեր տարեկան ճաշկերույթը Նոյեմբերի 2-ին յաջողությամբ պատկերացաւ: Սրահը լեցուն էր հսկայական որ հիօրեր չունէինք: Արդիւր գեղեցկօրէն կատարեց իր պաշտօնը: Աւետը երգեց, Սուգին մտագեց, հովիւներ աղօթեցին եւ Վահիկ եղբայրը հոգեշունչ օրհնեալ պատգամ մը փոխանցեց: Ծաշերը հասով էին, հասատացեալները ուրախ ու Տէրը փառատրուած: Անակկալօրէն յիշեցաւ հովիւին տարեդարձը ու գեղեցիկ նուէրներ տրուեցան թէ Լուս Անճերալի եւ թէ Ետթալի եկեղեցիներուն կողմէ: Գնահատուեցան, Վէր. Գասարճեան, Աւետ Եղբայր, Վահիկ եղբայր, Ծորճ եղբայր, Կատարիճ եւ Արշալույս քոյրեր:
- Այս առթիւ առաջին անգամ ըլլալով ունեցանք Մաղաքեալ Մարգարեութեան սերտորոյթիւնէն ու «Կը փնտրուին Դանիէլներ»-էն օրհնակներ քսաւթի եւ սկաստակի վրայ: Եկեղեցիին կամ համայնացանցի հասցէին դիմելով կրնաք գնել արձանագրութիւններէն: Ընորհակալութիւն յանձնախումբին, յատկապէս Այլի քրոջ:
- Նոյեմբերը 15-17 եկեղեցական համագումարն էր Բայն Գրեւորի մէջ: Ուրբաթ երեկուեան բաթ լազ ընթրիքով մը սկսանք: Վէր. Հասիպ Այաճանի շատ պարզ կերպով ներկայացոց կարեւոր ծառայութիւններ եկեղեցիէն ներս վեր առնելով Աստուածաշունչէն հերոսներ, տիպարներ: Ետթալի հաստացեալները Գէորգ եղբայր Պարոնեանի առաջնորդութեամբ մեծ խանդավառութիւն ստեղծեցին: Պաշտամունքները Անդրանիկ եղբայրը առաջնորդեց, Սիւն քոյրն ալ բաժին բերաւ: Սեաւը, Սառան, Դահիճը, Յարութիւնն ու Գէորգը մտագեցին: Կիրակի առաւօտ Ծորճիկ, Յակոբ եւ Գէորգ եղբայրները պատգամներ մատուցին հիւր պատգամաբերի եզրակացնելէն առաջ: Պաշտօնական խմբակին նկար մըն ալ ունեցանք: Ընորհակալութիւն Գէորգ եղբայր Սիւնեան եւ Սիրվա քոյր Ուղոսեան:
- Նոյեմբեր 20-ին Միոյթեան առաջնորդներ ընկերակցութեամբ մեր հովիւին Ետթա մեկնեցան Արարատ Աւետարանական եկեղեցիի հարցերով կարգադրութիւններ կատարելու: Սրտբաց եւ մտերմիկ յօսակցութիւններ եղան. կը յուսանք որ շուտով արդիւնքի կը հասնինք: Առաջնորդն ու աստեանայետը դիմաւորեցին ու ժամանակ անցուցին հիւր եղբայրներուն հետ: Իրիկուան տեղական եկեղեցիի հաստացեալներէն ոմանք հասագրած էին Պարոնեաններու բնակարանը: Վէր. Մէլքոնեան պատգամեց, երգեցինք, աղօթեցինք եւ հիւրասիրուեցանք: Անուշ քոյր շնորհակալութիւն համեղ ճաշերուն համար:
- Գոհաբանութեան Կիրակին 24-ին յատուկ պաշտամունք ունեցանք: Գոհաբանութեան ու փառաբանութեան երգեր եղան, Կիրակնօրեայի աշակերտները երգելով ու Սաղմունքով բաժին առին Արթուր եղբոր մտագակցութեամբ: Քոյրերը... ա՛խ քոյրերը: Ծառայելու պատրաստ քոյրերը նուիրեցին, եփեցին, պատրաստեցին եւ հրամցուցին. ամէն բան կարգին էր. Մարազ քոյրը համադրած էր ամէն բան: Հոգեւոր ու մարմնատր, կերանք ու կշտացանք: Տօնեցինք նաեւ մեր եկեղեցիի ամենէն երէց եղբոր Բեմիամին Կարապետեանի 95 ամեակը: Աստուած ստոյգ պահէ՛ մեր եղբոր ու շարունակէ ներկայ ըլլալ իր տան մէջ ու Տիրոջ տան մէջ:
- Տէրը կամի երաժշտական յայտագիր մը կը պատրաստուի մեր երգչախումբին կողմէ, որուն ուրիշ եկեղեցիներէ ալ կը մասնակցին: Դեկտեմբեր 22-ին Կլէմտէլի մէջ տեղի կ'ունենայ: Փոքրերն ալ առանձին բաժնով կը մասնակցին: Հրապարակեալ անապաշխարներ որպէսզի բուն հոգեւոր երաժշտութիւնն ու ծնունդի պատգամը:
- Այս տարի ալ ծառայակցներով ընթրիք մը պիտի ունենանք Դեկտեմբեր 23-ին: Տարբեր մարգերէ ներս ծառայողներ, իրիկուան ժամը 7-ին միասին ըլլանք:
- Աւետում պիտի ունենա՞նք: Եթէ երգողներ կան անշուշտ: Մասնակցիլ փափաքողներ հովիւին դիմեցէք որպէսզի իրականացնենք:

## ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

- ◆ *Փրկութիւնը երկնքի կը պատրաստէ:*
- ◆ *Նուիրումը ամենացած տեղը իջնել է, ոչ թէ բարձր տեղ հասնի:*
- ◆ *Աստուծոյ գործին համար տալու մի վախճանար: Եթէ տասանոց մը տաս, Ան քեզի հարիւրնոց մը կու տայ:*
- ◆ *Վաղը Աստուծոյ գաղտնիքն է, բայց այսօրը քուկը է ապրելու համար:*

# ՄԻԱՅՆ ՍՈՒՐԲ ՏԵՐ

Երկնքի սուրբ սիրո մասին  
Թող անդադար միայն գովեմ  
Ու Ձեռքերս վերեւ պարզած  
Ծունկի վրա երկրպագեմ  
Տաք արցունքներ հուլունք-հուլունք  
Աչքերիցս թող վար թափեն  
Ու արտիցս Քեզ բարձրանան  
Գովեստ հարգանք ու մեծարում:  
Ու սիրելով կրնանք փշրել  
Ու սիրելով կրնանք կոտրել  
Չարի ուժերը վա՛ր նետել ինադին  
Ու հաղթելով քեն  
Նախանձ հաշվարկ շահամոլին  
Կասկածամիտ կեղծավորին  
Հպարտ-հպարտ ներս մտնողին  
Չարի բոլոր դեմք դիմակին  
Ու Երկնքեն սեր առնելով  
Սրտի խորքում աղոթելով  
Հոգետր երգ մրմնջալով  
Սուրբ սիրով լիցքավորվելով  
Ձեռքերներս վերեւ պարզած  
Գոչենք փառք տանք Երկնավորին:  
Միայն Սուրբ միայն Սուրբ միայն Սուրբ  
Միայն Տեր միայն Տեր միայն Տեր  
Միայն Սեր միայն Սեր միայն Սեր:

Նարինե Սարգիսյան  
Հայաստան

## ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Եթե ՏԵՐը կ'առաջնորդէ այս թերթիկին կամ այն եկեղեցապատկան ծառայութիւններու նիւթական աշակցութիւն բերել, սրտանց կը գնահատենք:

---

## Armenian Evangelical Brethren Church

3200 London St., Los Angeles, CA 90026

(213) 483-7265 / Fax (213) 483-7002

Internet: [www.aebcm.org](http://www.aebcm.org) – E-mail: [aebcministries@aol.com](mailto:aebcministries@aol.com)